ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ ФИЛОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF ARMENIAN PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Աբովյան 52ա Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52а 52a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia

(+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.ysu.am

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4
# ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
# 2026 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

*Օրակարգում՝*

1. Առկա ուսուցման 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվություն:
2. 2022-2025 թթ. փետրվար-մարտ ամիսներին հրամանագրված կամ հայցորդությունը երկարաձգած հայցորդների տարեկան ատեստավորում:
3. Հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման ուսանողներին անվանական կրթաթոշակներ տրամադրելու հարցը:
4. ՀՀ լեզվաքաղաքականության հայեցակարգի նախագծի քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում է 23-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

**Օրակարգի 1-ի հարցի** առթիվ ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի առկա ուսուցման մագիստրատուրայի ավարտական թեզերի ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվել է երկու առանձին հանձնաժողովներով՝ հայոց լեզու և հայ գրականություն մասնագիտացումների բաժանումով: Գիտխորհրդին ներկայացվեցին հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, որոնցում մասնավորապես նշված էր. 2025-26 ուստարում մագիստրոսական թեզեր պաշտպանվել են երեք ծրագրով՝ «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» և «Հայ գրականություն»:

«Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» ծրագրով պաշտպանությանը մասնակցել է 9 ուսանող, որոնցից 4 ուսանող ստացել է 20 միավոր, 5 ուսանող՝19 միավոր։
«Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» ծրագրով պաշտպանությանը մասնակցել է 5 ուսանող, որոնցից 4 ուսանող ստացել է 20 միավոր, 1 ուսանող՝ 19 միավոր։ «Հայ գրականություն» ծրագրով պաշտպանել է 9 մագիստրանտ, որից 7 մագիստրանտ ստացել է 20 միավոր, մեկ մագիստրանտ՝ 19 միավոր, մեկ մագիստրանտ՝ 18 միավոր։
Մագիստրոսական թեզերի պաշտպանությունն անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել։
Պաշտպանության ներկայացված մագիստրոսական թեզերը ընդհանուր առմամբ համապատասխանում էին ներկայացվող պահանջներին և գիտական չափանիշներին։
Աշխատանքներում, ըստ կանոնակարգային պահանջի, ներկայացված էին ուսումնասիրության նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ներկայացված էր համապատասխան գրականությունը, պահպանված էին նաև կառուցվածքային, տեխնիկական պահանջները։
Պաշտպանության ընթացքում ուսանողները ցուցադրում էին նաև աշխատանքի լուսապատ-կերային տարբերակը։
Պաշտպանությանը մասնակցած ուսանողները հիմնականում կարողանում էին ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, պատասխանել հանձնաժողովի հարցերին։ Ընդհանուր առմամբ ուսանողների մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, և թերի պատասխանները փոքրաթիվ էին։ Մագիստրոսական թեզերի թեմաները հիմնականում հաջող էին ընտրված։ Դրանք մեծ մասամբ արդիական էին, կային արդեն հայտնի թեմաների նորովի մեկնաբանություններ։ Նշենք, որ որոշ թեմաներ կարելի էր քննել նյութին առնչվող առավել ընդգրկուն համատեքստում։ Ցանկալի է, որ ուսանողները ցուցաբերեին ավելի շատ վերլուծական մոտեցում։ Ներկայացված աշխատանքների ընդհանուր որակը, ուսանողների պատրաստվածությունը վկայում էին, որ թեզերի ղեկավարները և համապատասխան ամբիոնները իրենց աշխատանքը կատարել են անհրաժեշտ մակարդակով։ Աշխատանքներում հիմնականում պահպանված էին նաև տեխնիկական պահանջները։ Գրախոսները ևս իրենց կարծիքները ներկայացրին պահանջված չափանիշներին համապատասխան։ Գրախոսություններում հստակ նշված էին ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում առկա վրիպակներն ու թերությունները, արվեցին տեղին դիտարկումներ, որոնք, կարծում ենք, օգտակար կլինեն հետագայում գիտական այլ աշխատանքներ կատարելիս։
Պաշտպանության ընթացքում պահպանված էին ընթացակարգային պահանջները, որը վկայում է ֆակուլտետի դեկանի և դեկանատի աշխատակիցների լավ աշխատանքի մասին։

**Օրակարգի 2 - րդ հարցի** առթիվ ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը խոսքը տվեց ֆակուլտետի տարբեր ամբիոնների՝ գիտխորհրդի նիստին հրավիրված հայցորդներին, որոնք համառոտ ներկայացրին տարվա ընթացքում իրենց կատարած աշխատանքների մասին հաշվետվություն։

**ա) ԼՍԵՑԻՆ –** ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի հայցորդ Աննա Գագիկի Ալավերդյանի տարեկան ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - Պրոֆ., պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Սարգսյանը, Ա. Տեր-Մինասյանը, Թ. Տոնոյանը:

Նշվեց, որ աշնանային և գարնանային կիսամյակներում Աննա Ալավերդյանը մասնակցել է հայցորդների համար նախատեսված պարտադիր և կամընտրական դասընթացներին և հավաքել պահանջվող կրեդիտները: Ուսումնասիրում է ատենախոսության թեմային վերաբերող նյութերը, կատարում է քարտագրում: Պատրաստվում է հանձնելու որակավորման քննությունները: Տպագրության է պատրաստել 1 գիտական հոդված: Ատենախոսությունը շարադրանքի փուլում է:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Հայոց լեզվի ամբիոնի հայցորդ Աննա Գագիկի Ալավերդյանին ատեստավորել:

**բ) ԼՍԵՑԻՆ –** Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Արաքսյա Գառնիկի Բաղդասարյանի տարեկան ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - Պրոֆ. Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը և այլք:

Նշվեց, որ հայցորդ Արաքսյա Գառնիկի Բաղդասարյանը տարվա ընթացքում կատարած աշխատանքի վերաբերյալ որևէ հաշվետվություն չի ներկայացրել, ամբիոնի նիստին ներկա չի եղել, և ամբիոնը նրա կատարած աշխատանքի վերաբերյալ որևէ տեղեկություն չի ստացել: Ա. Բաղդասարյանը չի ատեստավորվել ամբիոնի նիստին չներկայանալու և հաշվետվություն չներկայացնելու պատճառով:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Արաքսյա Գառնիկի Բաղդասարյանին չատեստավորել:

**գ) ԼՍԵՑԻՆ –** Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Լիաննա Անդրանիկի Բաղդասարյանի տարեկան ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - Պրոֆ. Ա. Մակարյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Վ. Եղիազարյանը, Ա. Ջրբաշյանը և այլք:

Նշվեց, որ Լիաննա Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Արքետիպի և սիմվոլի համակարգը հայ արդի հեղինակային հեքիաթում» (գիտ. ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Աստղիկ Սարգսի Բեքմեզյան):

Լիաննա Բաղդասարյանը ուսումնական տարվա ընթացքում մասնակցել է ասպիրանտական 5 դասընթացի, հաջողությամբ հանձնել է ստուգարքները և ստացել այդ դասընթացների համար նախատեսված կրեդիտները:

Հայցորդն ատենախոսության թեմայով տպագրել է 1 գիտական հոդված, առաջիկայում նախատեսում է ևս երկու հոդված ուղարկել տպագրության:

Հայցորդը 2025 թվականի սեպտեմբերի 14-ից 24-ը գործուղվել է Ֆրանսիայի Էքս Մարսել համալսարան: Գործուղման ընթացքում զբաղվել է տեսական գրականության ուսումնասիրություններով: Հանդիպումներ է ունեցել Էքս-Մարսել համալսարանի գրականության բաժնի մի շարք դասախոսների հետ և մասնակցել նրանց դասերին:

Հանդիպումների ընթացքում զեկուցումով է հանդես եկել հետազոտության թեմայի շրջանակում: Այս պահին պատրաստում է հոդված՝ հիմնվելով գործուղման ընթացքում ուսումնասիրած տեսական գրականության վրա:
2025 թվականի հունիսի 19-ին մասնակցել է Հայաստանում կայացած «Իմ թեզը 180 վայրկյանում» («Ma thèse en 180 secondes») մրցույթի ազգային եզրափակչին, որը կազմակերպվել էր Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության (AUF) կողմից, և ստացել երկրորդ մրցանակը:

Այս ուսումնական տարվա ընթացքում շարունակել է զբաղվել ատենախոսության համար բնագրերից տեղեկատվության ընտրությամբ և համակարգմամբ, ինչպես նաև ուսումնասիրել է տեսական գրականություն:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Լիաննա Բաղդասարյանին ատեստավորել:

**դ) ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Կարոլինա Արմենի Խաչատրյանի տարեկան ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - Պրոֆ. Ա. Մակարյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Վ. Եղիազարյանը, Ա. Զրբաշյանը և այլք:

Նշվեց, որ Կարոլինա Արմենի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Հակոբ Պարոնյանը և ֆրանսիական գրականությունը» (գիտական ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆ. Ալբերտ Արշավիրի Մակարյան):

Կարոլինա Խաչատրյանը ուսումնական տարվա ընթացքում մասնակցել է ասպիրանտական դասընթացի, հաջողությամբ հանձնել է ստուգարքները և ստացել այդ դասընթացների համար նախատեսված կրեդիտները: Հայցորդն ատենախոսության թեմայով տպագրության է պատրաստել 1 գիտական հոդված: Հայցորդը այս ուսումնական տարվա ընթացքում հիմնականում ուսումնասիրել է ատենախոսության վերաբերյալ տեսական գրականությունը, սկսել է շարադրել ատենախոսությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Կարոլինա Արմենի Խաչատրյանին ատեստավորել:

**ե) ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Աննա Սողոմոնի Սողոմոնյանի տարեկան ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - Պրոֆ. Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ն. Դիլբարյանը, Վ. Պետրոսյանը և այլք:

Նշվեց, որ Աննա Սողոմոնյանի թեման է «Թվի կարգը գրական արևելահայերենում, գերմաներենում և ռուսերենում» (գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Վարդան Զորիկի Պետրոսյանը): Ա. Սողոմոնյանը ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում հրատարակել է 4 գիտական հոդված, 1-ն էլ շուտով կհանձնի տպագրության: Ուսումնասիրել է թեմայի վերաբերյալ գրականությունը, սկսել է շարադրել ատենախոսությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Աննա Սողոմոնյանին ատեստավորել:

**զ) ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Շողիկ Արամայիսի Մելքոնյանի տարեկան ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - Պրոֆ. Ա. Մակարյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Վ. Եղիազարյանը, Ա. Զրբաշյանը և այլք:

Նշվեց, որ Շողիկ Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Ռուբեն Սևակը XX դարասկզբի հայ գեղարվեստական մտածողության համապատկերում»: Շողիկ Մելքոնյանը Մասնակցել է պարտադիր և կամընտրական առարկաների դասընթացներին, ստացել 20 կրեդիտ: Վերջնական տեսքի է բերվել թեզի կառուցվածքը, որը բաղկացած է ներածությունից, 3 թեմատիկ գլուխներից (ներառյալ համեմատական վերլուծության և լեզվաոճական քննության բաժինները) և եզրակացությունից: Հետազոտության արդյունքների հիման վրա տպագրել է 1 գիտական հոդված, աշխատում է 2-րդ հոդվածի վրա:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Շողիկ Արամայիսի Մելքոնյանին ատեստավորել:

**Է) ԼՍԵՑԻՆ** – ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Հայկ Ղուկասի Սիրունյանի տարեկան ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - Պրոֆ. պրոֆ. Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Վ. Եղիազարյանը, Ա. Զրբաշյանը և այլք:

Նշվեց, որ Հայկ Սիրունյանի ատենախոսության թեման է «Արդի հայ գրականության ժանրային միտումները և Ղուկաս Սիրունյանի ստեղծագործությունը (1970-2010-ական թվականներ)»: Հ. Սիրունյանը մասնակցել է պարտադիր և կամընտրական մի շարք դասընթացների: Ատենախոսության թեմայի վերաբերյալ կատարել է արխիվային նյութերի ուսումնասիրություն՝ ի մի բերելով Ղ. Սիրունյանի անտիպ գործերը: Ուսումնասիրել է ժամանակի մամուլը («Գարուն», «Գրական թերթ», «Ազգ» ևն) և առանձնացրել հեղինակի ստեղծագործության մասին գրված հոդվածներն ու գրախոսությունները, որոնք անհրաժեշտ կլինեն վերլուծական աշխատանքի ժամանակ: Միաժամանակ ուսումնասիրել է նաև Ղուկաս Սիրունյանի սերնդակից բանաստեղծներին՝ շրջանի գրական մթնոլորտն առավել լավ պատկերացնելու և իրեն առաջադրված խնդրին համալիր լուծում տալու նպատակով:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ Հայկ Ղուկասի Սիրունյանին ատեստավորել:

**ը) ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Նազիկ Սարգիսի Ասատրյանի տարեկան ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - Պրոֆ. Ա. Մակարյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Վ. Եղիազարյանը, Ա. Զրբաշյանը և այլք:

Նշվեց, որ Նազիկ Սարգսի Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Կնոջ ազատագրության խնդիրը արևմտահայ գրականության մեջ»: Նազիկ Ասատրյանը մեկ տարվա հայցորդության ընթացքում մասնակցել է անհրաժեշտ բոլոր դասընթացներին և հավաքել կրեդիտային առավելագույն միավորը՝ 33: Ուսումնական տարվա ընթացքում ուսումնասիրել է թեմայի վերաբերյալ տեսական գրականությունը, տպագրության է պատրաստում 1 գիտական հոդված:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ

**Օրակարգի 3 - րդ հարցի առթիվ.**

**ԼՍԵՑԻՆ** - Հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման ուսանողներ Անի Արտակի Ռևազյանին, Լարիսա Գարիկի Ծատրյանին, Սոնա Հարությունի Ղազարյանին, Նենսի Վարդանի Բարսեղյանին, Լալա Գևորգի Միքայելյանին անվանական կրթաթոշակներ տրամադրելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. -** Պրոֆ., պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ալ. Մակարյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Սարգսյանը, Ա. Տեր-Մինասյանը, Թ. Տոնոյանը:

Նշվեց, որ 4-րդ կուրսի ուսանողներ Սոնա Հարությունի Ղազարյանը (Գրիգոր Նարեկացու անվան կրթաթոշակ), Նենսի Վարդանի Բարսեղյանը (Մեսրոպ Մաշտոցի անվան կրթաթոշակ), 3-րդ կուրսի ուսանողներ Անի Արտակի Ռևազյանը (ԵՊՀ-ի անվան), Լարիսա Գարիկի Ծատրյանը (Ստեփան Ալաջաջյանի անվան) ուստարվա 1-ին կիսամյակը ավարտել են գերազանց առաջադիմությամբ և պահպանել են անվանական կրթաթոշակ ստանալու իրավունքը: Ֆակուլտետը առաջարկում է «Խորեն Պալյանի անվան» կրթաթոշակը 4-րդ կուրսի ուսանող Նորա Անդրեյի Մեսրոպյանի փոխարեն հատկացնել 4-րդ կուրսի ուսանող Լալա Գևորգի Միքայելյանին՝ հաշվի առնելով վերջինիս գերազանց առաջադիմությունը և հասարակական ակտիվությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման ներքոհիշյալ ուսանողներին տրամադրել հետևյալ անվանական կրթաթոշակները՝

1. Ծատրյան Լարիսա Գարիկի՝ «Ստեփան Ալաջաջյանի անվան» - հայ բանասիրության ֆակ., առկա 3 - րդ կուրս,
2. Ռևազյան Անի Արտակի՝ «ԵՊՀ-ի անվան» - հայ բանասիրության ֆակ., առկա 3 - րդ կուրս,
3. Միքայելյան Լալա Գևորգի՝ «Խորեն Պալյանի անվան» - հայ բանասիրության ֆակ., առկա 4 - րդ կուրս,
4. Ղազարյան Սոնա Հարությունի՝ «Գրիգոր Նարեկացու անվան» - հայ բանասիրության ֆակ., առկա 4 - րդ կուրս,
5. Բարսեղյան Նենսի Վարդանի՝ «Մեսրոպ Մաշտոցի անվան»- հայ բանասիրության ֆակ., առկա 4 - րդ կուրս:

**Օրակարգի 4 - րդ հարցի** առթիվ ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ ՀՀ Լեզվի կոմիտեի կողմից ԵՊՀ մասնագիտական քննարկման է ներկայացված ՀՀ լեզվաքաղաքականության հայեցակարգի նախագիծը: Այն ուղարկվել է բոլոր ամբիոնների վարիչներին՝ ծանոթանալու և առաջարկությունների համար: Հարցի վերաբերյալ արտահայտվեցին հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյանը, պրոֆ. Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ն. Դիլբարյանը, Ս. Գրիգորյանը, Թ. Տոնոյանը: Նշվեց, որ նախագծի բոլոր կետերը մանրամասն քննության են առնվել, և որոշ դրույթների վերաբերյալ կան

դիտարկումներ. գիտխորհրդին ներկայացվեց նախագծի վերաբերյալ մասնագիտական կարծիքը, կազմվեց առաջարկությունների փաթեթ, որը ֆակուլտետը առանձին կներկայացնի:

**Ընթացիկ հարցերում** քննարկվեցին.

**ԼՍԵՑԻՆ –** ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ Արինա Արինա Արտակի Դավթյանի ատենախոսության թեմայի փոփոխության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**:- Պրոֆ. պրոֆ. Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Մ. Ֆալակյանը, Թ. Տոնոյանը և այլք:

Նշվեց, որ հետազոտական աշխատանքի թեման ավելի հստակեցնելու համար առաջարկվում է թեմայի վերնագիրը մասնակիորեն փոփոխել:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ Արինա Արտակի Դավթյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել «Ազգամշակութային բաղադրիչ պարունակող բառային և դարձվածքային միավորների թարգմանության խնդիրները (հայերենի, ռուսերենի և անգլերենի նյութի հիման վրա)»՝ Ժ 02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ